

ներկեր բերել Պարսկաստանէն կամ Կովկասէն: Անտարակոյս իրենց փնտռած այս մասնագէտը, կամ ներկերն ու անոնց զաղտնիքը պիտի ակնկալուէր որ Թուրքիայէն բերուէին, եւ ոչ թէ Կովկաս, Հայաստան կամ Պարսկաստան փնտռուէին, եթէ իրապէս անոնց արեւելեան գորգերուն համար առ հասարակ գործածած Թուրքի գորգերը բաւացի իմաստով առնենք: Ուրիշ ապացոյց մըն ալ: 1573ին M. Lionel Plumtree անգլիացին կը պատմէ որ Կասպից ծովուն վրայ ծովահէն Գազաքներ կը յարձակին անգլիացի վաճառականներու վրայ եւ նաւը կը զրաւեն ու անոնց ինչքերը կը կողոպտեն: Վերջապէս Աստրախանի ուսու իշխանութիւնը կը դռնէ ծովահէններուն որջը եւ հազարաւոր ոսկիներու հասնող կողոպուտ, եւ ի միջի այլոց «ինչ որ Թուրքի գորգեր վնասուած ու կտրուած չարազործ ծովահէններէ»<sup>(62)</sup>:

Սըր ճան Շարաշն Փրանսացի ուղեգիրն է որ առաջին անգամ մեզի բացատրութիւն կու տայ «Թուրքի գորգերու» մասին: 1670ին ան կը գրէ Պարսկաստանի գորգերուն, մասնաւորաբար Գիրմանի եւ Մէխտանի մէջ հիւսուածներուն մասին. «Այս գորգերն են որ մենք Եւրոպայի մէջ հասարակ կերպով Թուրքի գորգեր կը կոչենք, որովհետեւ ատոնք բերուած են Թուրքիոյ վրայով՝ նախ քան Ովկիանոսի (Հնդկական) ճամբով ուղղակի պարսիկներուն հետ առուտուր ընելնին»<sup>(63)</sup>:

Ուրեմն, ինչպէս ըսի, Թուրքի գորգեր որակումով միայն թրքական հասկնալու չէ, այլ արեւելեան բոլոր գորգերը, եթէ նոյնիսկ անոնք ըլլային Հայաստան, Կովկաս կամ Պարսկաստան շինուած:

Շատ են վկայութիւնները Թուրքի դարբերի մասին Եւրոպացի գրողներուն մօտ, սակայն աւելորդ է աւելի երկարել այս մասին այստեղ: Ամերիկայի մէջ ալ նոյնն էր այս սխալ անուանումը: Տր. Ռ. Մ. Ռիֆսթալ կ'ըզրակացնէ. «Թրքական գորգերը Արեւմուտքի մէջ լաւագոյն ճանչցուածներն էին արեւելեան գորգերէն: Արդարեւ, Թուրքի գորգ կոչումը եւ արեւելեան գորգ հոմանիշներ էին»<sup>(64)</sup>: Իրաւ է, Թուրքի գորգ հոմանիշ էր արեւելեան գորգի, սակայն ատիկա եղած էր ոչ որովհետեւ Արեւմուտքի մէջ ծանօթ լաւագոյն գորգերը Թրքական գորգերն էին, այլ անոր համար որ անոնք Թուրքիայէն կ'արտածուէին Եւրոպա, իսկ Թուրքիա կը բերուէին արեւելեան գորգ շինող բոլոր երկիրներէն, առեւտուրի ճամբաները թրքական նաւահանգիստները միայն կրնային հասնիլ:

Մինչ Հայաստան գրեթէ բոլոր աշխարհագիրներու կամ ուղեգիրներու կողմէ անխախտ ընտիր հիւսուածեղէններու, գորգերու եւ ներ-

(62) Անգ, հատոր Բ, էջ 124:

(63) Կը կրկնէ John Harris, «Complete Collection of Voyages and Travels», London, 1764, Vol. II, p. 895a: եւ Horatio Southgate, «Narrative...», 1840, New York, Vol. II, p. 12.

(64) Good Furniture Magazine. — Յունուար, 1926, «Some travel Notes on Turkish Rugs».